

# Խորհրդակցություն Արմավիրում՝ բոլոր մարզպետների մասնակցությամբ

10.04.2015



Ապրիլի 10-ին ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանն Արմավիրի մարզում խորհրդակցություն անցկացրեց Հայաստանի 10 մարզերի ղեկավարների հետ, խորհրդակցությանը մասնակցում էր նաև ՀՀ Վերահսկիչ պալատի նախագահ Իշխան Չաքարյանը: Խորհրդակցության ընթացքում քննարկվեցին աշնանացան ցորենի, դիզվառելիքի և ազոտական պարարտանյութի բաշխման հարցերը, ինչպես նաև եկամուտների հավաքագրման գործընթացը:

Իշխան Չաքարյանը ՏԿԱԻ նախարարին և մարզպետներին ներկայացրեց սույն թվականի օգոստոս ամսին Հայաստանում կայանալիք Համահայկական հերթական 6-րդ ամառային խաղերի կազմակերպմանն առնչվող հիմնախնդիրները: Ներկա դրությամբ՝ Համահայկական հերթական 6-րդ խաղերին մասնակցելու հայտ են ներկայացրել աշխարհի 3200 մարզիկներ:

Քննարկելով կազմակերպչական աշխատանքների գործընթացը և տալով համապատասխան հանձնարարականներ՝ նախարար Երիցյանը շեշտեց, որ Համահայկական խաղերի կազմակերպման հարցում համատեղ աշխատանքի փորձ արդեն կա և այս անգամ նույնպես միջոցառումն իրականացվելու է բարձր մակարդակով:

Մարզպետները նախարարին զեկուցեցին նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ մարզերում իրականացվող և իրականացվելիք միջոցառումների շուրջ տարվող աշխատանքների մասին:

Մասնավորապես քննարկվել է գյուղացիներին սուբսիդավորված դիզվառելիքի տրամադրման հարցը: Նախարար Երիցյանը հաստուկ շեշտեց, որ կառավարության նպատակն է այսօր օգնել գյուղացուն և այդ նպատակին միտված միջոցառումները լինելու են ՀՀ վարչապետի և իր վերահսկողության ներքո: ՏԿԱԻ նախարարին զեկուցեցին նաև, որ համայնքներում

փաստաթղթաշրջանառությունը բարվոք վիճակում չէ: Արմեն Երիցյանը հանձնարարեց նախարարության աշխատակիցներին գործուղվել համապատասխան համայնքներ և տեղում օժանդակել խնդրի լուծմանը: <<Նախարարությունը պետք է ամեն ինչ անի համայնքներին օժանդակելու և մարզերի բնակիչների կյանքը թեթևացնելու համար>>, - շեշտեց ՏԿԱԻ նախարարը:

Նախարար Երիցյանը մի շարք հանձնարարականներ տվեց նաև համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի գործարկման վերաբերյալ, որպեսզի ծրագրի հնարավորությունները կիրառվեն առավելագույն արդյունավետությամբ: <<Մարզպետները պետք է տեղում աշխատեն գյուղացիների հետ: Պետք է լուծվեն գյուղմթերքի մթերման, մինի-գործարանների ստեղծման հարցերը: Պետք է ամեն ինչ անենք, որ գյուղացին լավ ապրի>>, - ընդգծեց Արմեն Երիցյանը:

Քննարկվեցին նաև մարզերում գործող վթարային դպրոցների վերակառուցման խնդիրները: ՏԿԱԻ նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը զեկուցեց, որ այս ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տարվում:

Ամփոփելով խորհրդակցությունը ՏԿԱԻ նախարարը նշեց, որ այսուհետ նման համամարզային խորհրդակցությունները լինելու են ամենամսյա և անցկացվելու են մարզերում: Հաջորդ խորհրդակցությունը կայանալու է մայիս ամսվա վերջին Տավուշի մարզում:

Աղբյուրը՝ [mta.gov.am](http://mta.gov.am), 10.04.2015